



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 սեպտեմբերի 2022 թվականի N 1446-Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետը, 2014 թվականի օգոստոսի 6-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում կառուցված և ձեռք բերված գույքի շահագործումը ծրագրի պահանջներին համապատասխան ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Տավուշի, Լոռու, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի համապատասխան համայնքներում/բնակավայրերում ստեղծված «արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին ժամանակավոր պահատվության հանձնված՝

357,884,000 (երեք հարյուր հիսունյոթ միլիոն ութ հարյուր ութսունչորս հազար) դրամ սկզբնական արժեքով պետական սեփականություն հանդիսացող գույքը նվիրաբերել նույն կոռպորատիվներին՝ համաձայն N 1 հավելվածի, կոռպորատիվների կանոնադրական խնդիրներին համապատասխան տվյալ համայնքում անասնապահության զարգացման նպատակով օգտագործելու պայմանով:

2. Պետական սեփականություն հանդիսացող՝ 186,968,000 (հարյուր ութսունվեց միլիոն ինը հարյուր վաթսունութե հազար) դրամ սկզբնական արժեքով գույքը՝ համաձայն NN 2 և 3 հավելվածների, ամրացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ բացառապես գույքի նպատակային նշանակությամբ օգտագործելու պայմանով:

3. «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ժամանակավոր պահատվության հանձնված՝ 15,998,800 (տասնհինգ միլիոն ինը հարյուր ինսունութե հազար ութ հարյուր) դրամ սկզբնական արժեքով պետական սեփականություն հանդիսացող գույքը նվիրաբերել նույն կազմակերպությանը՝ համաձայն N 4 հավելվածի՝ բացառապես գույքի նպատակային նշանակությամբ օգտագործելու և հետագայում չօտարելու պայմանով:

4. «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամին ժամանակավոր պահատվության հանձնված՝ 1,064,000 (մեկ միլիոն վաթսունչորս հազար) դրամ սկզբնական արժեքով պետական սեփականություն հանդիսացող գույքը նվիրաբերել նույն հիմնադրամին՝ համաձայն N 5 հավելվածի՝ բացառապես գույքի նպատակային նշանակությամբ օգտագործելու և հետագայում չօտարելու պայմանով:

5. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյումրու սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերությանը նվիրաբերել 23,950,000 (քսաներեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար) դրամ սկզբնական արժեքով պետական սեփականություն հանդիսացող գույքը՝ համաձայն N 6 հավելվածի՝

բացառապես գույքի նպատակային նշանակությամբ օգտագործելու և հետագայում չօտարելու պայմանով:

6. Պետական սեփականություն հանդիսացող՝ 129,384,750 (հարյուր քսանինը միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար յոթ հարյուր հիսուն) դրամ ընդհանուր սկզբնական արժեքով գույքը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքում գտնվող անասնաբուժական սպասարկման կենտրոնների շենքերը՝ համաձայն N 7 հավելվածի, սպասարկման կենտրոնների անվտանգության համակարգերը, գրասենյակային կահույքը, անասնաբուժական սարքավորումները և գործիքները՝ համաձայն NN 8 և 9 հավելվածների, ինչպես նաև «ՄԵԳՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ժամանակավոր պահատվության հանձնված «Ռենո-Էքսպրես» մակնիշի ավտոմեքենաները՝ համաձայն N 10 հավելվածի, ամրացնել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամին (գտնվելու վայրը՝ քաղ. Երևան, Ազատության 1/21,40)՝ համաձայնագրի պահանջների իրականացման նպատակով:

7. «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամին թույլատրել սույն որոշման 6-րդ կետում նշված գույքն անհատույց օգտագործման իրավունքով, նպատակային օգտագործման համար հանձնել անասնաբուժական սպասարկման համապատասխան կենտրոններում մասնագիտական գործունեություն իրականացնող՝ համապատասխան չափորոշիչներով ընտրված անասնաբույժներին:

8. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո չորսամսյա ժամկետում ապահովել՝

1) սույն որոշման NN 1, 4, 5 և 6 հավելվածներում նշված գույքի նվիրաբերության մասին պայմանագրերի կնքումը՝ համապատասխան կազմակերպությունների հետ և պահատվության պայմանագրերի լուծումը.

2) սույն որոշման NN 1, 4, 5 և 6 հավելվածներում նշված գույքի հանձնմանը նդունման գործընթացի իրականացումը.

3) սույն որոշման NN 2, 3, 8, 9 և 10 հավելվածներում նշված գույքի անժամկետ, անհատույց օգտագործման մասին պայմանագրերի կնքումը և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի հետ՝ ավտոմեքենաների պետական հաշվառման ծախսերն իրականացնելով վերջիններիս միջոցների հաշվին.

4) «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամին հանձնվող գույքի օգտագործման պայմանները սահմանել պայմանագրով:

9. Սույն որոշումից բխող գրանցումներն ու հաշվառումներն իրականացնել որոշման 8-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրերի կնքումից հետո՝ երկամսյա ժամկետում:

10. Նվիրաբերվող գույքի նվիրաբերության պայմանները սահմանել նվիրաբերության մասին պայմանագրերում՝ ծրագրի պահանջներին համապատասխան՝ դրանցում նախատեսելով, որ գույքը նվիրաբերության պայմաններին անհամապատասխան օգտագործելու դեպքում նվիրաբերողն իրավունք ունի պահանջելու նվիրաբերության վերացում:

11. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման N 7 հավելվածում նշված գույքի անժամկետ, անհատույց օգտագործման մասին պայմանագրի կնքումը «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի հետ, ինչպես նաև հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացնելով հիմնադրամի միջոցների հաշվին.

2) «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամին հանձնվող գույքի օգտագործման պայմանները սահմանել պայմանագրով:

12. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածում նշված գյուղատնտեսական տեխնիկայի և բեռնատար ավտոմեքենայի պետական հաշվառումն իրականացվում է համապատասխան կոդաբերատիվի միջոցների հաշվին:

13. Սահմանել, որ սույն որոշման N 6 հավելվածում նշված տեխնիկայի պետական հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյումրու սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան